ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. 1915 Թ. ՕԳՈՍՏՈՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ
2. ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
4. ՖԻԼՄԵՐ, ՏԵՍԱԶԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. 1915 Թ. ՕԳՈՍՏՈՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ

Մուսա լեռը կամ Մովսեսի լեռը գտնվում է նախկին Հալեպի նահանգի Անտիոք գավառում՝ Սվեդիա (Սուեդիա) գյուղաքաղաքի մոտ: Լեռան շրջակայքի վեց հայկական գյուղերի (Քեբուսիե, Վագըֆ, Խդրբեկ, Յողունօլուք, Հաջի Հաբիբլի, Բիթիաս) ավելի քան վեց հազար բնակիչները մինչև ցեղասպանությունը զբաղվում էին գյուղատնտեսությամբ, ունեին իրենց դպրոցները, եկեղեցիները:

1915 թ. գարնանը սուետիահայությանը հայտնի է դառնում հարևան գավառների հայության տեղահանությունը: Հուլիսի 29-ին վեց հայկական գյուղերի ներկայացուցիչների խորհրդակցության ժամանակ որոշվում է չենթարկվել բռնագաղթի հրամանին և ինքնապաշտպանություն կազմակերպել Մուսա լեռան վրա:

Հուլիսի 30-ին հայերին հրամայվում է թողնել իրենց բնակավայրերն ու գաղթել: Հայերի որոշ մասը, ենթարկվելով թուրքերի հրամանին, բռնում է գաղթի ճանապարհը և կոտորվում, մնացածը՝ մոտ հինգ հազար հոգի, հիմնականում կանայք ու երեխաներ, փրկության հույսով բարձրանում են Մուսա լեռը՝ նախապատրաստվելով ինքնապաշտպանության:

Ստեղծվում է հատուկ զինվորական մարմին՝ Եսայի Յաղուբյանի ղեկավարությամբ: Ռազմիկներն ընդամենը 600-ն էին՝ սահմանափակ թվով զենքով ու զինապաշարով: Զինվորական խստագույն կարգապահությամբ լեռան տարբեր հատվածներում հիմնվում են ռազմապաշտպանական իրար հաջորդող հենակետեր ու ամրություններ:

Օգոստոսի 7-ին թուրքերը ձեռնարկում են առաջին հարձակումը, սակայն հանդիպելով համառ դիմադրության՝ վեցժամյա մարտերից հետո, կորուստներ կրելով, նահանջում են:

Օգոստոսի 10-ին սկսվում է թշնամու երկրորդ հարձակումը, որին մասնակցում էր թուրքական բանակի 2.000 զինվոր՝ երկու թնդանոթով: Մառախլապատ եղանակի պատճառով վերջիններիս հաջողվում է աննկատ մոտենալ հայկական պահակակետերին: Չնայած թշնամու գերազանց ուժերին՝ մուսալեռցիներն ամրանում են պաշտպանական երկրորդ գծում և վարպետորեն օգտագործելով դիրքային առավելությունը՝ հետ են շպրտում հակառակորդի՝ մեկը մյուսին հաջորդող յոթ կատաղի գրոհները:

Օգոստոսի 19-ին սկսվում է երրորդ հարձակումը, որին մասնակցում էին 3.000 զինվոր և շուրջ 4.000 բաշիբոզուկ: Երկու օր շարունակվող մարտերից հետո թուրքերին հաջողվում է մի քանի կետերում ճեղքել հայերի պաշտպանությունը, սակայն, չկարողանալով հաջողության հասնել, մեծ կորուստներ տալով՝ նահանջում են:

Չկարողանալով կոտրել մուսալեռցիների դիմադրությունը՝ թուրքերը 15.000 զինվորների միջոցով շրջափակում են լեռը՝ փորձելով սովամահ անել հայերին: Մուսալեռցիների դրությունը խիստ ծանրանում է. վերջանում էին պարենն ու ռազմամթերքը:

Ինքնապաշտպանության ղեկավարները, դաշնակիցների մարտանավերից օգնություն ստանալու հույսով, որպես ազդանշան՝ լեռան ծովահայաց եզրին բարձրացնում են սավաններից պատրաստված երկու դրոշ: Մեկի վրա կարված էր կարմիր խաչ, մյուսի վրա առկա էր «Փրկեցե՛ք, քրիստոնյաները վտանգի մեջ են» գրությունը: Դրոշների շուրջը վառվում էին խարույկներ՝ անցնող նավերի ուշադրությունը գրավելու համար:

Սեպտեմբերի 5-ին ծովում երևում է ֆրանսիական «Գիշեն» հածանավը, որն իրավիճակը ճշտելու համար մակույկ է ուղարկում ափ: Տեղեկանալով հայերի դրության մասին՝ ռազմանավի հրամանատարությունը հեռանում է՝ օգնություն հասցնելու խոստումով:

Սեպտեմբերի 9-ին Սուեդիայի գավառապետը վերջնագիր է ուղարկում մուսալեռցիներին՝ առաջարկելով անձնատուր լինել, հակառակ դեպքում՝

սպառնալով կոտորել բոլորին: Սկսվում է նոր գոտեմարտ, որն ավարտվում է հայերի հաղթանակով:

Սեպտեմբերի 10-ին՝ հերոսամարտի 53-րդ օրը, ծովում երևում է ֆրանսիական երկու ռազմանավ: Նախ՝ տարհանվում են կանայք, երեխաներն ու ծերերը, ապա՝ ինքնապաշտպանական ուժերը:

Սեպտեմբերի 13-15-ը շուրջ 4.000 հոգու ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» և այլ ռազմանավեր փոխադրում են դեպի Պորտ Սաիդ (Եգիպտոս), որտեղ հիմնվում է մուսալեռցիների վրանաքաղաքը:

Մուսա լեռան հերոսամարտը թուրք ոճրագործների դեմ հայ ժողովրդի մղած դիմադրության փայլուն դրվագներից է: Այն իր գեղարվեստական արտացոլումն է գտել ավստրիացի նշանավոր գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում:

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԵՎՈՐԳ ՉԻՖԹՉՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(ԾՆՎ. 1909 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ, ՔԱԲՈՒՍԻԵ ԳՅՈՒՂ)



Ես ծնվել եմ Մուսա Լեռան Քաբուսիե գյուղում: Հերոսամարտը դեռ չսկսած՝ հայրս լեռ տարավ մեր անկողիններն ու ուտելիքը, հետո եկավ, որ մեզի տանի, թուրքն արդեն չորս-հինգ հարյուր զինվորով եկել պաշարել էր մեր գյուղը, քանի որ մեր գյուղը գլխավոր ճամփին մոտ էր: Ֆելահների մոտ ինչքան էշ կար՝ բարձեցին, մեզ տարին Անթաքիա: Այնտեղից ալ տարին Համա: Մի մասը ծարավ. ջուր չկա, մեծահասակները չեն կարողանում քայլել, մնացին ճամփաները: Մենք չորս ախպեր էինք: Բոլորն ալ մեռան, քույրս ալ: Հասանք Համա: Պապուկս նստած էր գետնին, ժանդարմ մը էկավ, ըսավ. - Պիտի տանիմ քեզ հիվանդանոց:

Պապուկիս տարան: Մյուս օրը հայրս գնաց հորը տեսնելու, տեսավ, որ թույնել էին և արաբայով տարել լցրել էին հորերը՝ հազարավոր հայերի հետ: Մի մաղարա կար, մեզ տարան մեջը լցրին: Հոն Գանա անունով մի միջատ կար, որ կծի՝ մարդ կմեռնի: Ուտելիք չկա: Սոված ենք: Ձիբիլի միջից հանում ենք փորթուգալի կեղև, մարուլի տերև, ուտում: Ինձի պես հինգ-վեց տարեկան քառասուն-հիսուն երեխա կար: Մի թուրք փաշա կար, ամեն մեկիս մի պատառ հաց կուտար: Ան ինձի ըսավ. - Քեզի մեթալիք կուտամ, դուն էկուր տունս ավլե:

Գացի ավլեցի, բայց դրամը չտվավ։ Ծեծեց ինձի, ես արյունլվա ընկա գետին, երբ ուշքի եկա, փախա անապատ։ Հոն տեսա մի արաբ նամազ կընե։ Հոն ինձի բռնեցին, ձիու վրա կապեցին, բայց ես փախա։ Ֆարբո անունով մի գյուղ կար։ Արևը մայր էր մտել, վախենում էի՝ շները ուտեն ինձ։ Հոգնած ընկա մի տան մոտ՝ քնացա։ Առավոտը տեսա կովերը խոտ կուտեն, ես ալ անոնց հետ խոտ կերա։ Տեսա՝ չորաթան կա, ուզեցի առնել, մեկը թոփուզով խփեց գլխիս։ Ես ընկա մեռածի պես։ Գիշերը արթնցա, տեսա ցրտեն դողում եմ։ Թոնդիրի մեջ մտա, տաքցա։ Առտուն արաբ կնիկը եկավ՝ ելի՛ր, ըսավ։ Մոխիրի մեջ ծեծված տեղերուս արյունը չորացել էր, ըսավ. «Ալլա՛հ յա խրուբեյթուն, յա՛ հարամ, մի՞ն դարաբակ» (Աստվա՛ծ քանդի նրա տունը, ափսո՛ս, ո՞վ խփեց - արաբ.)։

Նստեցրեց, հաց տվեց, ուտելու ժամանակս մի կին էկավ փաթաթվեց ինձ։ Տեսա՝ մորքուրս էր. «Ջիգյա՛րս, - ըսավ, - մորդ, հորդ կբերեմ», - և պատմեց, որ ան թուրք փաշան, որ մի-մի կտոր հաց էր տալիս հայ երեխեքին, հացի մեջ թույն էր լցրել, ամբողջ մի ֆուրգոն լիքը երեխեք տարել, լցրել էին փոսը։ Այնթապում ալ հայերի երեխաներին լցրել էին եկեղեցին, բենզին լցրել, վառել էին, ո՛չ մեկը ողջ չէր մնացել։ Ադ ժամանակ Ջեմալ փաշան էր իշխում։ Նա իննից-տասնչորս տարեկան հայ աղջիկներից իրեն հարեմ էր սարքել։ Հայերը դրա համար նրան սպանեցին։

Մյուս օրը մի պառավ ըսավ. «Հայաթը մաքրի՛ր, զիբիլը թափի՛ր»։ - Արեցի, համա հացը չտվեց։

Հորս տարին բանակ՝ խրամատ փորելու։ Մնացինք ես, մայրս ու ծծի երեխան։ Մայրս հիվանդացավ, գժվեց։ Երեխան մնաց սոված։ Ես գնում էի այծերի կաթը կթում, բերում էի, որ երեխան ծծում էր։ Հետո էդ երեխային՝ իմ փոքր եղբորը, տարինք, դրինք եկեղեցու դուռը, քանի որ մենք այլևս չէինք կարող նրան պահել։ Արաբ քրիստոնյա մի ընտանիք եկավ նրան տարավ պահելու։

1918 թ. Համայից Մուսա Լեռ ոտքով ետ գնացինք։ Ուտելիք՝ չկա, ջուր՝ չկա։ Մեր մուսալեռցիքը դեռ Պորտ Սայիդեն չեն եկած։ Թուրքերը մեզ տեսան.

- Գյավուրները էկան, - ըսին, փըրթ ու փաբուջ փախան։

Բայց չախկալները, վայրի գազանները մեզ գիշերները վախեցնում էին։ Կամաց-կամաց ժողովուրդն սկսավ լեցվիլ Մուսա Լեռ։ Սկսան հողը ցանել, հնձել, ապրեցինք, ողջ մնացիք…

ԹՈՎՄԱՍ ՀԱԲԵՇՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ, ՅՈՂՈՒՆ-ՕԼՈՒՔ ԳՅՈՒՂ)

Մուսա Լեռան կռիվի ժամանակը տասներկու տարեկան էի։ Կհիշեմ, որ ժողովուրդը խուռներամ կբարձրանար լեռը։ Ժողովներ եղան գյուղին մեջ, որ գաղթենք պիտի։ Ժողովի մեջ իրարանցում մը սկսավ. թե՝ մենք հանցանք մը չենք ըրած. ինչու՞ պիտի գաղթենք և կամ թե՝ լեռ բարձրանանք։ «Լեռը բարձրանանք» ըսին։ Տուն, տեղ, ամեն ինչ ձգեցինք, ելանք լեռը։

Հաջի-Հաբիբլի և Բիթիաս գյուղերը երկմտանքի մեջ էին, քանի որ Նոխուդյան պատվելին դեմ էր լեռ բարձրանալուն։ Նա համոզեց ժողովրդին, որ գաղթեն։ Իսկ Քաբուսիե գյուղը գրեթե ամբողջը գաղթեց։ Միայն տասնյոթ ընտանիք լեռը բարձրացավ։ Ընդհանուր հաշվով, շուրջ վեց հազար մարդ բարձրացավ լեռը։

Լեռան վրա յուրաքանչյուր ընտանիք փայտից խրճիթներ շինեց, քանի որ կղմինդր, քար չկար։ Երիտասարդ տղաները պատնեշներ շինեցին։ Երկու ժողով ըրին։ Մեկը՝ վարչական, լեռան ներքին կյանքը, մյուսը՝ ռազմական ուժերը պիտի կազմակերպեր։ Այս մարմինները կային։ Կռիվը սկսավ։ Առաջին պատասխան գնդակը արձակեց Սարգիս Գաբաղյանը։ Կռիվը շարունակվեց։ Թշնամին զորավոր դիմադրություն մը տեսավ և ետ նահանջեց։

Ֆրանց Վերֆելը գեղարվեստորեն Թուրքիո ոճիրը ներկայացուց և հայ ժողովրդի դիմադրողական պայքարը։ Ժողովուրդ, որը գիտակցաբար լեռ կբարձրանա, գիտակցելով մահը։ Ժողովուրդը զինված ապստամբ մըն էր։

Երեք գլխավոր ճակատամարտ եղավ։ Մեր ժողովուրդը միշտ հաղթական ելավ։ Գիտեին, որ մեր պարենը նվազ է, առաջը ձմեռ է, բայց հաղթանակը

ոգևորեց մեզ, մենք նաև հույս ունեինք, թե ծովեն եվրոպացի դաշնակից նավ մը կանցնի։ Մեր վիճակը ներկայացված էր դիմումով։ Կողքը քրիստոնեական կարմիր խաչ մը կար։ Հասած էր օրհասական ժամը։ Մեզ նշմարող եվրոպացի առաջին նավը «Կիշեն» նավն էր, որ կխուզարկեր ծովափը։ Հեռադիտակով կտեսնեն, որ պաստառներ կան, մարդիկ կան։ Կուգան կստուգեն, նավակ մը կուղարկեն։ Ֆրանսերեն, անգլերեն գիտցողներ կային։ Ադմիրալը հրաման կուտա. «Մեկ շաբաթ թող սպասեն»։

Լեռը ամբողջ մշուշ էր։ Տասը քայլի վրա իրար չէին տեսնար։ Մեկ ալ մշուշը բացվեցավ, նավը երևաց։ Բոլոր վերմակներուն սավանները քանդեցին, դրոշակ շինեցին, օդի մեջ պարզեցին ուրախությամբ։ Թուրքերը վերջին ճիգ մը ըրին՝ հարձակվեցան, բայց մերոնք նորեն վրա տվին։ Հերոսաբար պայքարեցին։

Շաբաթ մը հետո ծովակալը ուրիշ չորս նավեր ալ ղրկեց։ Ի վերջո, ծովակալը՝ Դարտիֆ դը Ֆուրնեն ինքը եկավ «Ժան դ՚Արկ» նավով, տեսավ, որ պահը ճգնաժամային է, պետք է օգնել և մարդկայնորեն իր անձնական պատասխանատվությամբ իր նավերուն մեջը առավ ամբողջ ժողովուրդը, միայն թիկունքը ապահով պահեց, որ թշնամին չհարձակվի։

Նախ՝ Կիպրոս են գացած, դիմած են անգլիացիներուն։ Անոնք՝ «Տեղ չունինք» ըսած են։ Պորտ Սայիդը հականեխելու փոստ մը կար։ Այդ հականեխման կենտրոնը տարին թափեցին մեզի։ Նավերը մեզի կերակուր կհասցնեին։ Մուսալեռցիները հոն մնացին չորս տարի։ Դաշնակից ուժերու պարենավորման բաժինը և Եգիպտոսի կառավարությունը մեզի պահեցին։

Ֆրանսական կառավարությանը մենք խնդրեցինք, որ մեզ վարժեցնե, քանի որ մեր կռիվը վերջացած չէր թուրքերի հետ։ Ֆրանսական դրոշին տակ մեր տղաները զենքի վարժություններ կընեին։ Հետո մասնավոր պատգամավորներ այցելեցին և որոշեցին, որ մուսալեռցիներու նախաձեռնությամբ զինվորական մարզանքի վարժություններ կազմակերպվեն։ Ազգային խորհուրդը այդ ուզեց։ Կազմակերպվեց Հայկական Արևելյան բանակը՝ տասնութից վաթսունհինգ տարեկան՝ առանց բացառության, արձանագրվեցին, ղրկվեցին Կիպրոս, որը

ընդհանուր զինվորական մարզական կենտրոն էր։

Հայերը զորավար Ալենբիի գլխավորությամբ Արարայի մոտ թուրք և գերման զինվորական անպարտելի բանակին հաղթեցին և նրանց հալածեցին մինչև Կիլիկիա։ Եվ Կիլիկիան հայկական օջախ դարձնելու ծրագիր մը առաջ քաշվեց։

ԻՍԿՈՒՀԻ ԿՈՇԿԱՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(ԾՆՎ. 1902 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Երբ դալալը մեր գյուղը՝ Յողուն-Օլուք էկավ, կանչեց, որ աքսոր պիտի էրթանք, ես ադ ժամանակ աղբյուրը ջուրի գացած էի։ Լալով տուն էկա։ Տեսա՝ իրար անցած էին բոլորն ալ։ Թենջիրեները լիքը՝ ճաշերը մեջը եփած, թողինք, բարձրացանք լեռը։

Լեռին վրա տղամարդիկ կռվան։ Շատ կռվան։ Գնդակները մեր գլխուն վրայեն կերթային-կուգային, մենք ողջ մնացինք։

Մի օր մեր տեղացի մի մարդ թուրքերուն Դամլաջըքի մեթարիսներուն՝ դիրքերուն ճամփան էր սորվեցնում, մեր տղաները անոր լեզուն կտրեցին, ականջը կացինով խփեցին կտրեցին, քարերը վրան լեցուցին՝ կույտ եղավ, լեռան վրա մինչև հիմա կա երևի։ Աղե՛կ ըրին։ Ինչի՞ պիտի դուշմանին ցույց տար մեր ճամփան։ Արդեն թուրքերը մի քսան հայու բռնել, թուրքացրել էին երեխեքին։ Հազարներով թուրք եկավ մեզ վրա։ Մենք չհանձնվանք։ Վերջը ճերմակ եորղանի երեսները բայրուղ՝ դրոշակ բացեցինք, քովն ալ կրակ վառեցինք։ Արդեն որոշել էինք մենք մեզի ծովը նետել՝ քարերուն, ժայռերուն վրայեն։

Ախպերս սկսավ լալ. - Մամա՛, չերթանք, մեզի ծո՛վը պիտի թափեն։

Ութ օր վերջը ֆրանսական նավեր էկան, դեմերնիս կայնան։ Ֆրանսացիները պզտիկ նավակներով էկան-էկան, մեզի տարին մեծ նավերուն մեջ։ Ամեն բան թողինք լեռը։ Միայն ջաներնիս ազատեցինք։ Իմ հերը՝ Հայրապետ Պոլիսյանը, ճամփաները կպահեր, իջանք ծովին քենարը… Եսայի Յաղուբյանը, որ մերին կնքահայրն էր, ամենեն վերջը նավ մտավ։ Որ ամենքը

մտան նավ, նավուն մեջեն դուլբինով նայեց կապիտանը, որ թուրքերը մեր Յողուն-Օլուքը լցվել են։ Էդպես անցանք գնացինք Պորտ Սայիդ։ Ետքը չորս տարիեն նորեն Մուսա Լեռ գացինք։

1939-ին թուրքերը նորեն եկան։ Աս անգամ մենք Այնճար գնացինք։

1946-ին Հայաստան եկանք, որ թուրքերեն ազատվինք։ Մեզ Մասիսում տեղավորեցին։

Սվազլյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Ինքնապաշտպանության ղեկավարներից՝ Եսայի Յաղուբյան

Մուսալեռցի պատանի հերոսները, 1915

Ֆրանսիական նավատորմի կողմից փրկված մուսալեռցիները

Շուրջ 4000 մուսալեռցիների փրկած դրոշներից մեկը

«Սիսվան» դպրոցի մուսալեռցի աշակերտները, Պորտ Սաիդ

Մուսալեռցիները ֆրանսիական ռազմանավ տեղափոխվելիս



Ֆրանսիական «Գիշեն» հածանավը



Ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» հածանավը

ՖԻԼՄԵՐ, ՏԵՍԱԶԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ականատեսի օրագիր. Սուպուկյան Ասատուր Սահակի (1901թ., Մուսա Լեռ)

   https://www.youtube.com/watch?v=A96sPaYCcBA

2. 1981- Մուսա լեռան 40 օրը, ռեժ. Ջ. Քյուրքչյան

   https://www.youtube.com/watch?v=H3oA8dtPznI

3. Ավստրիահայ պատմաբան, ռեժիսոր, դոկ., պրոֆ. Արտեմ Օհանջանյանի «Ֆրանց Վերֆել.«Մուսա լեռան քառասուն օրը» հեռուստատեսային կինոնկարը https://www.youtube.com/watch?v=-i-uTvjjULE

4. Ականատեսի օրագիր. Մախուրյան Ասատուր Մովսեսի (1911թ., Մուսա Լեռ)

   https://www.youtube.com/watch?v=k370s6_0ivQ